

Ձեռնարկ ԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ, ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՆՎԱՁԵՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Արժույթի ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. ձեռնարկատիրություն, ռիսկ, նվազեցում, պահպանում, փոխանցում

Ռիսկ ասելով անհրաժեշտ է հասկանալ կորուստ կրելու հնարավոր վտանգը, որը բխում է երևույթների և մարդկային հասարակության գործունեության առանձնահատկություններից: Ռիսկը՝ որպես պատմական կատեգորիա, ծնունդ է առել մարդկության զարգացման վաղ ժամանակաշրջանից: Մարդիկ վստահ չեն եղել, որ կբավարարեն իրենց կենսաբանական, անվտանգության և այլ պահանջմունքները: Հետագայում ապրանքադրամական հարաբերությունների ձևավորման և զարգացմանը զուգընթաց՝ ռիսկը դարձավ նաև տնտեսագիտական կատեգորիա: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ տնտեսական գործընթացի վրա ազդում են մեծ թվով փոփոխական գործոններ, երբ նախօրոք միարժեք ձևով հնարավոր չէ կանխատեսել դրանց հանդես գալու կոնկրետ զուգորդությունները: Այսինքն, տնտեսական իրավիճակի անորոշությունը պատճառ է հանդիսանում, որ գործունեության հնարավոր արդյունքները տարբեր ցուցանիշներով հանդես գան: Որոշակի տնտեսական կատեգորիա՝ ռիսկի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն որոշակի իրավիճակներում կարող է վնասի պատճառ հանդիսանալ, իսկ հանգամանքների մեկ այլ զուգորդությունը պայմաններում նման հետևանքների չունենալ¹:

«Ռիսկ» տերմինի բացատրական մեկնաբանությունը տալիս են գրեթե բոլոր բառարանները: Օրինակ, Վ. Դալի բացատրական բառարանում, այն մեկնաբանվում է որպես «գործողություն՝ հաջողության հույսով», Ս. Օժեգովի բառարանում ռիսկը բացատրվում է որպես մարդու պատկերացում հնարավոր վտանգի և կորստի վերաբերյալ, որպես հաջող ավարտ խոստացող գործունեություն: Իսկ օրինակ Էդ. Ադայանը ռիսկը բնութագրում է որպես որևէ բանի հնարավոր վտանգ, հենց այնպես սկսած, բախտին ապավինած գործ, գործունեություն, հնարավոր վտանգը արհամարհելու խիզախություն, հանդգնություն: Ա. Ղարիբյանը բացատրում է որպես հնարավոր վտանգ, կամ խիզախում²: Ռիսկի բնութագրությունը կարելի է շարունակել, սակայն կանգ առնելով դրա բնորոշ հատկանիշների վրա, կարող ենք առանձնացնել հետևյալները՝

¹ Ս. Բուլանիկյան, Գ. Չատինյան, Վ. Բուլանիկյան, Ա. Չատինյան «Ձեռնարկատիրական ռիսկ» : (Ձեռնարկ տնտեսագիտական բուհերի ուսանողների համար), Երևան, Տնտեսագետ, 2000, էջ 9
² Գրիգորյան, Ռաֆայել «Ռիսկի կառավարում» : Ուսումնական ձեռնարկ Երևան, 2010, էջ 13

- անորոշությունը
- վտանգի առկայությունը
- հանդգնությունը (խիզախումը),

Այս որակները միանշանակ վերագրվում են գործունեություն ծավալելու հանգամանքին: Իհարկե, գործունեություն ոչ բոլոր ձևերի վերջնական արդյունքը կարող է նյութականանալ, առարկայական կամ դրամական տեսք ստանալ, սակայն վտանգը, կորուստը, վնասը այս կամ այն չափով միշտ էլ առկա կլինի: Ձերնարկության տնտեսական գործունեության արդյունավետության ապահովումը էապես կախված է արդյունքի հնարավոր ելքերի կանխատեսումից և տնտեսական այլընտրանքային իրավիճակներից լավագույնի ընտրությունից: Սակայն կանխատեսման նույնիսկ լավագույն մեթոդները հնարավորություն չեն տալիս միարժեքորեն լուծելու այդ խնդիրը, քանի որ վերջնական արդյունքի կանխատեսումը իրականացվում է բավականին մեծ մոտավորությամբ: Տնտեսական գործարքների անորոշության հիմնական պատճառներն են՝

- դրանց վերաբերյալ տեղեկությունների սակավությունը կամ բացակայությունը,
- պատահական գործոնների հակազդեցությունը,
- իրավիճակների անկանխատեսելիությունը և դրանց հետևանքների ստույգ գնահատման անհնարությունը³:

Անորոշությունը նվազում է տնտեսական գործարքների արդյունքների վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելուն զուգընթաց: Այս առումով ավելի նպատակահարմար է լրացուցիչ ծախսեր կատարել անորոշությունը նվազեցնելու համար, քան գործունեություն ծավալել անկանխատեսելի պայմաններում: Հաճախ հնարավոր կորուստների չափերը զգալիորեն գերազանցում են ռիսկը նվազեցնող միջոցառումների մշակման և ներդրման համար պահանջվող ծախսերը: Արդյունքի անորոշությունը զգալիորեն աճում է պատահական գործոնների ազդեցության ներքո: Այդպիսի գործոնների թվին կարելի է դասել խոշոր գիտական հայտնագործությունները, բնական աղետները, զոդությունները, պատերազմները, հեղափոխությունները, գործադուլները, ընդհարումները, պայմանագրերի խախտումները, շուկայում ապրանքների գների կտրուկ փոփոխությունները և այլն: Տնտեսական գործունեության մեջ ռիսկի խնդրի հետ կապված անհրաժեշտ է նշել, որ այն օբյեկտիվ երևույթ է, այսինքն, եթե իրականացվում է որևէ գործունեություն, ապա ռիսկ գոյություն ունի՝ անկախ նրանից՝ հաշվի են առնում, թե անտեսում են այն:

³ Էվինյան Շահեն Դավթի «Ձեռնարկության էկոնոմիկա» (Ռուսոմնական ձեռնարկ) Շ.Դ. Էվինյան, ԴՊՏԳ.Երևան, Տնտեսագետ, 2007 էջ 36.

Գ.Բ.Կլեյների կարծիքով ռիսկային գործոններին պետք է դասել մուտքային և ելքային հոսքերի միայն այն հնարավոր փոփոխությունները, որոնք անհնար է նախօրոք կանխատեսել և միանշանակ նախագուշակել՝ տեղեկատվության և մտավոր ռեսուրսների օգնությամբ: Իսկ ըստ Վ.Շախովի՝ ռիսկը, ինչպես անհատի, այնպես էլ ամբողջ կազմակերպության համար, պլանային և փաստացի արդյունքների միջև շեղումն է: Ձեռնարկության տնտեսական գործունեությունը արդյունավետ իրականացնելու համար կարևոր նշանակություն ունեն մի կողմից՝ ռիսկի տեսակի ճիշտ որոշումը, մյուս կողմից՝ ռիսկային իրավիճակ առաջանալու դեպքում՝ վնասները բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակ հետապնդող նախագուշակական միջոցառումների մշակումը և ներդրումը: Դա թույլ է տալիս, ռիսկերի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները հաշվի առնելով, կիրառել կառավարման արդյունավետ մոտեցումներ: Այս առումով կարևոր նշանակություն ունի ռիսկի դասակարգումը: Ըստ տնտեսական ռիսկի հիմնական տեսակների առանձնահատկությունների և ընդհանուր հատկանիշների՝ դրանք կարելի է դասակարգել որոշակի խմբերի:

Ըստ ձեռնարկության ղեկավարության ընդունած վճիռների կիրառության մակարդակի՝ տարբերում են ռիսկի գլոբալ (համապետական) և լոկալ (տեղային) տարատեսակները⁴: Դրանք գտնվում են հակասությունների այնպիսի միասնության մեջ, որի միջոցով փոխազդում և պայմանավորում են միմյանց՝ պահպանելով իրենց ինքնուրույնությունը: Գլոբալ մակարդակով ընդունված (օրինակ՝ պետության հարկային, մաքսային, վարկային և զնագոյացման քաղաքականությանը վերաբերող) որոշումները ռիսկի տարրեր են պարունակում՝ ձեռնարկության գործունեության և զարգացման տեսակետից: Եվ, հակառակը, ձեռնարկության մակարդակում ընդունված առանձին վճիռները կարող են գլոբալ ռիսկեր պարունակել և հակադրվել համապետական շահերին: Այդպիսիք են, օրինակ, արտադրության զարգացման ֆոնդին կատարվող հատկացումների չափերի անհիմն նվազեցումը, որը հանգեցնում է առաջատար տեխնիկայի և տեխնոլոգիայի մշակման ու ներդրման աշխատանքների դանդաղեցմանը կամ բացառմանը, անմրցունակ արտադրանքի թողարկմանը: Կարճաժամկետ կամ իրավիճակային ռիսկը⁵ առաջանում է արտադրանքի արտադրության և վաճառքի տարեկան, եռամսյակային և ամսական պլանների ոչ ճիշտ հաշվարկման, ձեռնարկության աշխատանքի համաչափության խախտման, արտադրության նորմալ գործընթացի ընդհատման ու ակնկալվող ցուցանիշների զգալի վատթարացման

⁴ Հասմիկ Մարգարյան «Ձեռնարկատիրական ռիսկի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը անցումային տնտեսությամբ երկրներում» Երևան 2008, էջ 103:

⁵ Ս. Բուլանիկյան, Գ. Չատինյան, Վ. Բուլանիկյան, Ա. Չատինյան «Ձեռնարկատիրական ռիսկ» (Ձեռնարկ տնտեսագիտական բուհերի համար), Երևան, Տնտեսագետ, 2000. էջ 58:

հետևանքով: Ընդհանուր առմամբ ռիսկային ներազդեցությունների հանդես գալու հետևանքով հնարավոր են հետևյալ 3 բնույթի՝ ելքերը՝

1. դրական /շահում, շահույթ, հաղթանակ/
2. բացասական /վնաս, պարտություն/
3. զրոյական /վերադարձ ելակետային դիրքին/⁶

Կախված հետևանքների բնույթից ռիսկերը բաժանվում են երկու խմբի՝ զուտ (մաքուր) և սպեկուլյատիվ: Ձուտ համարվում են այն ռիսկերը, որոնց դրսևորման հետևանքով հնարավոր են միայն բացասական կամ զրոյական կարգի արդյունքներ: Սպեկուլյատիվ ռիսկերի հետևանքով, բացի նշվածներից, հնարավոր են նաև դրական ելքեր: Առաջին խմբի մեջ մտնում են բնական, բնապահպանական, քաղաքական, տրանսպորտային ռիսկերը, ինչպես նաև կոմերցիոն ռիսկերի մի մասը (զույքային, արտադրական և առևտրային): Սպեկուլյատիվ ռիսկերի խմբին են դասվում ռիսկի բոլոր ֆինանսական տեսակները և առևտրայինների մի մասը: Կախված ռիսկային իրադարձությունների հետևանքների բնույթից, բոլոր ռիսկերը բաժանվում են՝ (գծ. 1.1)⁷:

Բնական ռիսկերը հանդես են գալիս երկրաշարժների, փոթորիկների, համաճարակների, ջրհեղեղների և համանման այլ իրադարձությունների հանդես գալու դեպքում: Էկոլոգիական ռիսկերի շարքին են դասվում այն իրադարձությունները, որոնք վնասի պատճառ կարող են հանդիսանալ շրջակա միջավայրի էկոլոգիական պայմանների վատթարացման հետևանքով: Քաղաքական ռիսկերի շարքին են դասվում ան ռիսկերը, որոնք վնասի պատճառ են հանդիսանում պետության վարած տնտեսական ազդեցության պատճառով: Տրանսպորտային ռիսկերի մեջ ներառվում են այն իրադարձությունները, որոնք վնասի պատճառ կարող են հանդիսանալ տրանսպորտի տարբեր տեսակներով բեռների փոխադրման ձախողման դեպքերում: Գույքային ռիսկերը հանդես են գալիս դրանց նկատմամբ անտարբեր վերաբերմունքի, գողության, դիվերսիայի և համանման այլ դեպքերում: Արտադրական ռիսկերն առնչվում են արտադրական պրոցեսների նորմալ ընթացքի խախտմանը և պարապուրդներին:


Տնտեսական գործունեության կարևոր կանոններից մեկն ասում է. «Չխուսափել ռիսկից, այլ կանխատեսել այն և ձգտել հասցնել այն հնարավորին ամենացածր մակարդակին», իսկ դրա համար անհրաժեշտ է ճիշտ կառավարել ձեռնարկատիրական ռիսկը: Ձեռնարկատիրական ռիսկի կառավարումը դա միջոցառումների ամբողջություն է՝ ուղղված կանխագուշակելու և նախօրոք բացահայտելու ձեռնարկատիրական սուբյեկտի գործու-

⁶ Էդ. Դինգչյան «Ռիսկի մակարդակի գնահատման մեթոդական գործիքներ» Եր. 2011, էջ 90.


⁷ Գրիգորյան, Ռաֆայել Լենսերի: «Ռիսկի կառավարում» :Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՃՇՊՀ հրատ., 2010, էջ 77.

նեության համար ոչ ցանկալի ազդեցությունը, դրանց չեզոքացման միջոցների մշակումը և իրականացմանը:


Պճանկար 1.1. Ռիսկերի դասակարգումը⁸



Ռիսկի կառավարման ընթացքի հիմնական փուլերը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝



⁸ Գրիգորյան, Ռաֆայել Լենսերի: «Ռիսկի կառավարում»: Ուսումնական ձեռնարկ Երևան, ԵՃՇՊՀ հրատ., 2010, էջ 78.



Ռիսկի կառավարման առաջին փուլը իրենից ներկայացնում է ռիսկի հայտնաբերմանն ուղղված մեթոդների ամբողջություն:

Ռիսկի հայտնաբերման մեթոդները

Ռիսկերը գնահատելու և համապատասխան որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ է ռիսկ կրող օբյեկտի մասին նախնական ինֆորմացիա: Այս սկզբնական փուլը կրում է «ռիսկի բացահայտում» անվանումը և իր մեջ ներառում է 2 փուլեր.

1. Օբյեկտի կառուցվածքի մասին ինֆորմացիայի հավաքագրում
2. վտանգի կամ միջադեպի բացահայտում
 - Ձեռնարկատիրական օբյեկտների մասին նախնական ինֆորմացիայի հավաքագրման հիմանական մեթոդներին են վերագրվում՝
 1. ստանդարտացված հարցաթերթ
 2. վարչական և ֆինանսական հաշվետվությունների փաստաթղթերի քննում և վերլուծում
 3. եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների վերլուծությունը
 4. ձեռնարկատիրության կազմակերպական կառուցվածքի գնահատականների ստեղծումը և վերլուծությունը:
 5. արտադրական գործընթացի տեխնոլոգիական խմբերի քարտեզի ստեղծումը և վերլուծությունը
 6. արտադրական ստորաբաժանումների տեսչական այցելությունները
 7. տվյալ ճյուղի մասնագետների հետ խորհրդակցությունը

II փուլում ձեռնարկատերը պետք է գնահատի ռիսկը: Գոյություն ունեն ձեռնարկատիրական ռիսկի գնահատման հետևյալ մեթոդները՝

1. գնահատման վիճակագրական մեթոդ
2. փորձաքննական գնահատման մեթոդ
3. անալոգների օգտագործման մեթոդ
4. կոմբինացված մեթոդներ

Մաթեմատիկա-վիճակագրական մեթոդներ

Տվյալ մեթոդի գլխավոր գործիքներն են՝ դիսպերսիան (σ^2), միջին քառակուսային շեղումը (σ), տատանման գործակից (v):

$$\sigma^2 = \frac{\sum(x - \bar{x})^2}{\sum n}, \sigma = \sqrt{\frac{\sum(x - \bar{x})^2}{\sum n}}$$

n-յուրաքանչյուր իրադարձության հանդես գալու թվաքանակ

x- յուրաքանչյուր իրադարձության մաթեմատիկական սպասման արժեք

x- յուրաքանչյուր իրադարձության մաթեմատիկական սպասման միջին արժեք

Ընդ որում, ընտրության տեսանկյունից ընտրվում է այն տարբերակը, որը բնութագրում է դիսպերսիայի և միջին քառակուսայինի ամենափոքր արժեքով: Սակայն հնարավոր է դեպք, երբ ձեռնարկատիրական գործունեության տարբերակը մեկն է: Տվյալ դեպքում վերջինիս վերաբերյալ որոշում կայացնելու համար հաշվարկվում է տատանման գործակիցը՝

$$v = \frac{\sigma}{x} \cdot 100\%$$

v-տատանման գործակից

σ -միջին քառակուսային շեղում

\bar{x} -մաթեմատիկական շեղման միջին արժեք

Տարբերում ենք այս ցուցանիշների տատանման 3 միջակայք

1. 0-10% տատանման միջակայք՝ ռիսկի ցածր մակարդակով
2. 10-25% տատանման միջակայք, ռիսկի միջին մակարդակով
3. 25-100% տատանման միջակայք, ռիսկի բարձր մակարդակով⁹

Փորձաքննական գնահատման մեթոդ

Այս մեթոդը կարող է իրականացվել փորձառու ձեռնարկատերերի մասնագետների կարծիքների մշակմամբ: Ցանկալի է, որ փորձագետները իրենց գնահատականները հարաբերակցեն տարբեր չափի կորուստների հանդես գալու հավանականության տվյալներով: Ձեռնարկատիրական ռիսկի գնա-

⁹Беляков А.В., «Процентный риск»: анализ, оценка, управление, Финансы и кредит, 2001,#2, с.18.

հատման ժամանակ կարելի է բավարարվել տվյալ ռիսկի թուլատրելի ճգնա-
ժամային փորձաքննական գնահատականների ստացմամբ:

Անալոզների մեթոդ

Այս մեթոդն օգտագործվում է այն դեպքում, երբ ռիսկի գնահատման մյուս մեթոդները չեն կարող կիրառվել: Անալոզների օգտագործման ժամանակ հիմք է ընդունվում համանման գործիքների և նախագծերի ռիսկերի տվյալների բազան: Այս ձևով ստացված տվյալները նշակվում են նոր ձեռնարկատիրական գործունեության կամ գործարքների իրականացման ժամանակ պոտենցիալ ռիսկի հաշվարկման նպատակով:

Կոմքինացված մեթոդ

Սա իրենից ներկայացնում է մի քանի առանձին մեթոդների կամ դրանց առանձին մասերի միավորում: Օրինակ ձեռնարկատիրական ռիսկի հաշվարկումը գործարքի անցանկալի արդյունքների հավանականության հաշվարկման միջոցով: Տվյալ դեպքում ռիսկի վերլուծությունը կատարվում է վիճակագրական, փորձաքննական և անլոգիային մեթոդների օգնությամբ:

Հաջորդ փուլը ապագայում վնասները նվազագույնի հասցնելու նպատակով ռիսկի վրա ազդելու մեթոդի ընտրությունն է: Սրա խնդիրը նրանում է, որ գոյություն ունեն դրա նվազեցման մի քանի մեթոդներ: Այդ խնդիրը ռիսկի վրա ազդեցության մեթոդների համեմատական արդյունավետության գնահատումն է՝ դրանցից լավագույնի ընտրության համար:

Այս փուլից հետո հնարավոր է դառնում ձևավորել ձեռնարկատիրական ռիսկերի կառավարման ստրատեգիան: Դա որոշումների ընդունման փուլն է, երբ որոշվում են անհրաժեշտ ֆինանսական և աշխատանքային ռեսուրսները, կատարվում է հանձնարարությունների բաժանումը կառավարիչների միջև, համապատասխան ծառայությունների շուկայի վերլուծությունը և անց են կացվում խորհրդակցություններ մասնագետների հետ:

Ռիսկերի վրա ազդեցության գործընթացը ներկայացված է հետևյալերեք ձևով՝ նվազեցում, պահպանում, փոխանցում: Ռիսկի **նվազեցումը** ենթադրում է կամ հնարավոր վնասների չափի, կամ ոչ ցանկալի իրադարձությունների տեղի ունենալու հավանականության փոքրացում: Շատ հաճախ դա կատարվում է նախագուշացնող կազմակերպատեխնիկական միջոցառումներով՝ շենքերի անվտանգության ուժեղացման վերահսկողության համակարգի, հակահրդեհային սարքավորման տեղադրում և այլն: Ռիսկը մինչև մասնավորապես կարողանալով պահելը միշտ չի նշանակում ռիսկային գործողությունների մերժում: Կազմակերպությունը կարող է ստեղծել հատուկ պահեստային ֆոնդեր (ինքնապահովագրական ֆոնդեր կամ ռիսկի պահեստ), որից պետք է փոխհատուցվեն վնասները անցանկալի իրադարձության հանդես գալու

դեպքում: Այս մեթոդը կոչվում է ինքնաապահովագրություն և ընդունելի է, եթե ապահովագրվող ունեցվածքը համեմատաբար փոքր է ամբողջ կազմակերպության ունեցվածքի և ֆինանսական կապիտալի համեմատ: Ինքնաապահովագրությունը նպատակահարմար է նաև, երբ վնասների չափը բավականին փոքր է: Ռիսկի նվազեցման այս մեթոդի թերությունը լրացուցիչ կազմակերպչական ծախսերն են, հնարավոր ռիսկի մակարդակի ոչ ճշգրիտ գնահատումը, ինֆլացիայի ազդեցությունը պահեստայի ֆոնդերի վրա:

Ռիսկի պահպանման միջոցներից են նաև վարկերի կամ փոխառությունների ստացումը՝ վնասները փոխհատուցելու և արտադրությունը վերականգնելու նպատակով, պետական լրավճարների (դոտացիաների) ստացումը և այլն: Ռիսկի **փոխանցումը** նշանակում է պարտականությունների փոխանցում երրորդ կողմին առկա ռիսկի պահպանման դեպքում: Սրա վառ օրինակը ապահովագրությունն է, որը նշանակում է ռիսկի փոխանցում ապահովագրական ընկերություններին՝ որոշակի վճարի դիմաց¹⁰:

Ձեռնարկատիրական ռիսկերի ապահովագրությունը իրենից ներկայացնում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ունեցվածքի պաշտպանություն որոշակի իրադարձությունների՝ ապահովագրական պատահարների հանդես գալու դեպքում գումարային ֆոնդերի հաշվին, որոնք ձևավորվում են ապահովագրական վճարներից: Այսպիսով՝ հնարավոր ռիսկի մակարդակի իջեցման համար պետք է պահպանել հետևյալ կանոնները՝

1. Հարկավոր չէ խուսափել ռիսկից, պետք է հասցնել նվազագույնի:
2. Նախքան գործ սկսելը պետք է կանխատեսել, կորուստների ինչ ձևեր են հնարավոր տվյալ գործում, ինչքան է նրանց հավանականությունը:
3. Պետք չէ վախենալ այն կորուստներից, որոնց չափը չի գերազանցում սպասվելիք շահույթը, թույլատրելի են, եթե հաճախ չեն հանդես գալիս:
4. Սպասվող կորուստները, որոնք ունեն չափեր՝ եկամուտները գերազանցող, պետք է զգաստացնեն ձեռներեցին: Պետք է ձևավորվեն ինքնաապահովագրության ֆոնդեր՝ որոշելով աղբյուրները:
5. Շատ բարձր աստիճանի ռիսկի դեպքում ցանկալի է պայմանագրի միջոցով այն բաժանել մասնակիցների միջև:
6. Հարկ է խուսափել այն գործունեությունից, որը կապված է աղետալի հետևանքներով ռիսկի հետ, որոնք ձեռնարկատերը երբեք չի կարողանա փոխհատուցել: Ձեռնարկատիրական գործունեության մեջ այդ կորուստների հավանականությունը պետք է այնքան փոքր լինի (0-ին մոտիկ), որ հնարավոր լինի դրանք անտեսել: Այլապես չի կարելի ձեռնարկել այդ գործը:

¹⁰Устенко О.Л., «Теория экономического риска», К. 1997, с. 61.

Արծրունի ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ձեռնարկատիրական ռիսկի հասկացությունը, ձեռնարկատիրական ռիսկի աստիճանի նվազեցման մեթոդները

Բանալի բառեր. Ձեռնարկատիրություն, ռիսկ, նվազեցում, պահպանում, փոխանցում

Ձեռնարկատիրական ռիսկը որոշումների կայացման ընթացքում առկա այնպիսի զարգացումների հավանականությունն է, որոնք կարող են բացասական կամ դրական անդրադարձնալ տնտեսվարող սուբյեկտի շահույթի, կապիտալի, ընդհանրապես ամբողջ գործունեության վրա և հանգեցնել կորուստների կամ հակառակը: Ռիսկերի դրսևորումների դիապազոնը բավականաչափ լայն է: Ձեռնարկության գործունեության հետ առավել առնչվող ռիսկերն են՝ մարդկային գործոնի հետ կապված, գիտատեխնիկական առաջընթացին առնչվող, արտադրական, արտադրանքի իրացման, ֆինանսական, քաղաքական ռիսկերը: Յուրաքանչյուր ընկերության կայացման հաջողությունը ռիսկերի գնահատումն ու ռազմավարության ճիշտ ընտրությունն է:

Арцруни ВАРДАНЫЯН

Концепция предпринимательского риска, методы снижения бизнес-рисков

Ключевые слова: предпринимательство, риск, снижение, хранение, передача

Предпринимательский риск – это вероятность любых изменений в процессе принятия решений, которые могут оказать отрицательное или положительное влияние на прибыль предприятия, капитала в целом и привести к потере или наоборот. Диапазон проявлений риска достаточно широк. Риски, связанные с деятельностью предприятия связаны с человеческим фактором, технологический прогресс, касающиеся производства, продаж, финансовых и политических рисков. Успех каждой компании заключается в оценке риска и правильном выборе стратегии.

Artsruni VARDANYAN

The concept of entrepreneurial risk, methods of business risk reduction

Key words: entrepreneurship, risk, reduction, storage, transfer

Entrepreneurial risk is the likelihood of any changes in the decision-making process that can have a negative or positive impact on the profit of the enterprise, capital as a whole, and lead to loss or vice versa. Risks associated with the activities of the enterprise are related to the human factor, technological progress relating to production, sales, financial and political risks. The success of each company is to assess the risk and choose the right strategy.